



Խմբագրատուն ԾԱԿԱՆԵԱՆ
 Edit ԸՏԱՆԱՆ

Կը հրատարակուի առ այժմ ամէն
 իննգշաբթի օրեր իւր յատուկ տպա-
 րանէն, Թիւ 100 Սէնթըր
 փողոց, Նիւ Եորք, Ն. Ե.

ՆԻՒ ԵՈՐԴ, ՄԱՐՏ 13

ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

Լոնտոնի «Տէյլի Նիւզ»-է առ-
 նուած խմբագրական յօդուած
 մը ունէինք որ շատ հետաքր-
 քական իմաստով լի լինելուն
 մեր ազգային ինքրոյն վերայ
 պատրաստ էինք զայն վերադա-
 րու՝ մեր ընթերցողաց ուշադրու-
 թիւնը գրաւելու գիտողութեամբ,
 բայց Սրբազան Պատրիարքի ուղ-
 ղած կոնդակն առ Նորին Սրբազ-
 նութեան Նիւ Եորքի եպիսկոպո-
 սական Բօթըրի, ի մէջ գալով՝
 պարտաւորեցանք զայն յետաձը-
 գել և այս կոնդակն հրատարա-
 կել ի բերկրութիւն մերանոց:

Այս կոնդակը վաղուց հոս
 հասած էր, բայց որովհետեւ հոս
 կը կը պահանջէր որ զանի նախ և
 յառաջ ներկայացնել որու որ անկ
 էր, անհաճութեամբ սպասեցիք
 որ նա տեղի ունենայ: Կ'երեւի
 թէ Նորին Սրբազանութիւնը այնչափ
 ուշադրեցեր է դորա ընդունելու-
 թեամբը, որ պատշաճ է համար-
 ւեր զանի «Զըրզման» անուն եպիս-
 կոպոսական լրագրին մէջ տպել
 տալ յառաջ քան ուրիշ լրագրաց
 արտաճութիւն տրվելու: Բնորոշ
 պարտաւորեցանք մեք ևս սպա-
 սել նորա տպագրութեան: «Զըրզ-
 ման» իմաստովն ալ դորա աւելի
 կարեւորութիւն տալու գիտմամբ
 պատշաճ է համարել ինքեզին
 ճիշդ օրինակը փորագրել տալ և
 այնպէս ներկայացնել իւր ընթեր-
 ցողաց: այս աղագու սակու ինչ
 ուշ մնացեր էր: Բայց աս չար-
 թու «Զըրզման» տպագրութիւնը
 ձեռքերնիս հասնելով՝ փութով
 հրատարակել, բուն իսկ բնագիրն
 փորագրել տալով:

Այս բացատրութեան կու-
 ղեմք իմացնել թէ Պատրիարքա-
 կան կոնդակը հոս մեծ ազդեցու-
 թիւն ըրած և մեզ իրիտ պա-
 տիւ բերած է: Արդ՝ այս կոն-
 դակը կարգացող ո՞ր Հայ չուրա-
 խանար և չի գոռողի: Քանզի
 նովաւ յայտ առնուած է թէ Հայ
 ազգը հին ազգ մըն է և վաղեմի
 քրիստոնէոյ: Պիշօր Բօթըրի վը-
 սեմ վարմանօք Հայ գաղթական
 նութիւնը հաշակ վատկեցաւ և
 դովելի յանձնարարութիւն մը ըս
 տացաւ բոլոր Միացեալ Նահան-
 գաց մէջ:

Սրբազան Պատրիարք շատ մեծ
 սխալմանց մէջ ինկած էր մինչև
 ցայսօր իրեն խոհեմութիւն կար-
 ծած վարքովն ընդդէմ ազգային

պահանջմանց բացայայտ կարօտու-
 թեանց: Բայց երկու մեծագոր-
 ծութեամբ իւր պակասութիւն-
 ներն ծածկեց և ազգին ներողա-
 մտութեան և համարման արժա-
 նացաւ: Երանի թէ սա տեղի:

Մեծագործութեանց մին եղև
 իրեն մօտեցաւ արիարար վարվելը
 Բ. Դրան հետ իւր վերջնաբանը
 (ուրթիմաթում) անոր ներկայաց-
 նելով, ինչպէս որ իմացանք մի
 հեռագրով: և միւսն եղև այն
 կոնդակն, որով մեք՝ գաղթա-
 կանքս պատիւ ու համարումն ըս
 տացանք այս երկրի մէջ, ուր որ
 առաջ չէինք ճանչցուած շատ:

Այս ինչ մեծ հրաշագործու-
 թիւն որ տեղի ունեցաւ յանակն-
 կալս: Միթէ հանգուցեալ ՆԵՐ-
 ՍԷՍԻ հոգին էր որ Սրբազանին
 ըզըզ մէկէն իմէկ լուսաւորեց
 ազգասիրութեան, կամ թէ ՆԵՐ-
 ՍԷՍԻ ժամանակակիցք որք գեռ-
 կանք կը վարեն, և յուսամք որ
 շատ տարիներ ալ ապրին իրենց
 բաղձնաց հասնելու, որ է Հա-
 յապատանի աղատութիւնը տեա-
 նել, միթէ նոցա անխնայ ջանքն
 և անդադար աշխատութիւնն իւր
 բաւուելով, կամ թէ ժողովուր-
 դին սատակ բարկութիւնը հան-
 դարանցնելու համար նոր վարք
 մը ձեռք առաւ Նորին Սրբազ-
 նութիւն: Որոնք և իցեն. մեզ
 բաւ է գոհանալ այս ազգասիրա-
 կան հոգիին:

Այժմ նապատիւ Սարաճեանի
 գալուստը առիթ եղև այս երկրի
 ժողովուրդը գրգռելու և նովաւ
 հասարակաց դադարաւ մը յա-
 ռաջ բերելու այս երկրի մէջ ի
 շնորհս եր. քանզի նորա այցե-
 լութեամբ լրագիրք պարտաւորե-
 ցան Հայոց վրայ խօսիլ և ճիշդ
 տեղեկութիւն տալով՝ հարկաւ
 Հայական ինչ ինչ յառաջ բերել:
 Արդ՝ այս անակնկալ զիպուածցն
 պատճառ, նախ՝ վուսթըրի մեր
 պատուարժան ազգայինք եղան,
 որոց մասնաւոր ինքրանօք Սրբ.
 Պատրիարքն Արթ. Սարաճեանը
 ուղարկեց: յետոյ՝ Նիւ Եորքի
 Հայկական Միութիւնը, որոյ հրա-
 յիրանօք Ն. Արթ. հոս այցելեց
 և սուրբ պատարագ մատուցանե-
 լով եպիսկոպոսական երեկելի ե-
 կեղեցւոյ մը մէջ ժողովրդին հե-
 տաքբարութեան պատճառ եղաւ,
 և այն աղագու Հայութիւնը ծաղ-
 կեցաւ Նոր Աշխարհի մէջ:

Արդ՝ շնորհակալ եմք թէ
 վուսթըրի Հայոց և թէ հոս տե-
 ղի Հայկական Միութեան որ տ-
 անել բերրի և ազգագուտ դար-
 ծի մը անուղղակի միջոց և առիթ
 եղան:

**ԼՈՆՏՈՆԷ ՔԱՇՈՒԱԾ
 ՀԵՌԱԳԻՐԲ**

Կ. Պօլիս, Մարտ 7—«Ի նկատի
 առնելով Պուլիարիոյ և Հայաս-
 տանի միջև գաղտնի միարանու-
 թիւնը, որն որ՝ թուրքերուն ա-
 չաց Ռուսական նոր պատերազմի
 մը բացվելուն նշան կ'երևի, Բ.
 Դուռը որոշած է հրաւիրել Եւ-
 րոպայի տէրութիւն ժողով մը
 կազմելու որ բանը քննադատեն,
 սա պայմանաւ որ Պուլիարիոյ և
 Հայական ինքիւրք իրարմէ զոտ
 դատաքննուին»:

Դարձեալ ուրիշ հեռագիր մը,
 ամուսն Ծ թուականով կը ծանու-
 ցանէ թէ Սուլթան Մուրատ Ե.
 իւր մահկանացուն առաջի օր կըն
 քեր է:

Այս երկու հաղորդակցութե-
 իւնք միշտ են հասարակութիւնը
 ի մտածութեան: Ոմանք այնպէս
 կը գուշակեն թէ՝ որովհետեւ Սուլ-
 թան Մուրատ առանձնակեաց
 կեանք մը կը վարէր, և մէկը չէր
 կարող զինքը տեսնել, շատ հա-
 ւանական է որ նա իւր գահա-
 վիժութեան ատեն մեռած լինէր:
 Բայց հիմա յայտնուած է պարա-
 դաներու ստիպմամբ:

Յիշեալ պարագայք սոցա կը
 վերաբերին: Հայաստանի մէջ գոր-
 ծածուած բարարութեանք այն
 աստիճան սոսկալի եղան որ Եւ-
 րոպայի և Ամերիկայի ժողովուրդն
 հիացուցին և զայրացմամբ իրենց
 դէմ հարուցին՝ լուսաւորութեան
 նշանակութիւնը և դարուս պահանջ-
 մանց դէմ մղողութիւնն համա-
 բնով: Հարկաւ պետական պոչ-
 տօնաւէք սպառնալի վիճակէն
 հա թշնով մէջ ինկան: Բ. Դուռը
 ի համար առնուլ սաստկութեամբ,
 անանկ մը, ի չափս որ «Տէյլի
 Նիւզ» նշանակած է, որոյ յօդ-
 ուած յառաջիկայ թերթին
 պիտի հրատարակեմք, եոյ մի ու-
 րիշ մեծ տէրութիւն այնպէս ծա-
 նրր բանակցութիւն ստացած չէ:
 Եւրոպական խորհուրդի վարմանց
 առջը Բ. Դուռը համար՝ Բ. Դու-
 ռը ստիպու է հրաւիրել Եւրո-
 պական ժողով մը կազմել որ խոր
 հրդածութեամբ ծագած խռո-
 վութեան վիշ մը տան:

Թէ որ այս ժողովը տեղի ու-
 նենայ՝ ինչպէս որ հուսանական է,
 մեզ մեծ պարտաւորութիւն կը
 գոյացնէ և մեծ պատեհութիւն
 նորա վերայ հսկել և ազդեցու-
 թիւն բանեցնել, որպէս զի այս
 անգամ չը զրկուինք մեր իրա-
 ւացի իրաւունքէն, այսինքն՝ լիո-
 վին անկախութիւն և ազատու-
 թիւն, տոճկական սովորական
 մեղմոսանքէ, որն որ անհրաժեշտ
 պիտի գործածուի իրենց միայնակ
 որտալայրը ձեռքերնուն չի հա-
 նելու համար:

Մոլեռանդք, որոնցմով Սուլ-
 թանը շրջապատեալ է և նոցա
 ճնշմանը ներքե կը չարչարի, հար-
 կաւ պիտի չարաչար աշխատին որ
 իսլամութեան հակառակ վերջա-
 ւորութիւն չունենայ գործը, և
 ապահով մնալու համար՝ ոմանք
 կը կարծեն թէ Սուլթան Մու-
 րատ մէջ տեղէն բաւցուած է ի
 ժառանգութեան: Բայց ի զուր-
 քանզի ինչիւրը անձնականի վրայ
 չէ, այլ պետական սկզբանց վրայ
 հիմնեալ, Գանի որ թրքական կա-
 ռավարութիւնը մահմետական օ-
 լինաց վրայ կը կենայ, երկիրը
 բարենորոգում չէ կարող գտնել:
 Տաճիկը տաճիկ է. և անհրա-
 ժեշտ տաճիկ մնալու է միշտ: մե-
 լեռանդ, բարբարոս և լուսաւո-
 րութիւն ատող, սաստիկ հալա-
 ծիչ քրիստոնէութեան և ինչ որ
 նորա կը վերաբերի: Իրաւի խել
 մը անձինք յառաջ եկած են հի-
 մայ, որք ինքզինքնին «Երիտա-
 սարդ թիւրքութիւն» անուանած
 են, և կ'աշխատին Տաճկաստան
 եւրոպայի նմանցնել, այլ ի զուր-
 քանզի նոքայ ևս մահմետականու-

թեամբ չաղեալ են անկարող ըն-
 դարձակ քաղաքականութեան գա-
 ղափար մը ունենալ, և քաջ հա-
 մուռած լինելուն թէ թուրք
 կառավարութիւնը առանց մահ-
 մետականութեան չ'գոյանար, ան
 կարող են երկիրը բարենորոգե-
 լու:

Արդ՝ բանին էութիւնը այս-
 պէս գորով, մեր փրկութեան մի
 միայն միջոց է մեր փաստը յառաջ
 տանել, որ է Անկախութիւն և
 Աղատութիւն բարբարոս կառա-
 վարութեան, լուսաւոր հասարա-
 կութեան գիմելով...

ՀԱՅԵՐ Ի ՓԱՐԻՉ

Կը լսենք թէ փետր. 22ին Փա-
 րիզի հայ երիտասարդութեան կող-
 մէ տրուելիք ներկայացումն յետա-
 ձգուել է մարտ մէկին, պատրաստու-
 թիւններ լրանալուն համար: Այս
 ներկայացման չեղութիւնն աւելցնե-
 լու համար մի քանի հայ օրիորդներ
 ալ ճառեր պիտի խօսին և դաշնակ
 պիտի անեն: (Արմէնիա)

Երանի թէ մեք ևս կարենայինք
 Փարիզի Հայ երիտասարդութեան
 բարի օրինակին հետեւլ ատեն
 անեն ներկայացումներ ու հան-
 դէմներ տալով՝ առանց վարդա-
 նաց տարեգործի մը սպասելու:
 Հայ գաղթականութեան վիճակը
 կը պահանջէ որ ընկերական կա-
 պակցութեան միջոց մը ունենանք
 եւ նովաւ սերտ համակրութիւնը
 ծաղկեցնենք: Ասի ի գործ դնելու
 ոչ մի գոհարարութիւն կը տեսնեմք:
 Մէջերնս ստացնապատող տարե-
 րաց պակասութիւն չունիմք, կան
 բաւական տիկնայք ու օրիորդք որք
 քաջ ուսեալ եւ անուշ ձայնիւ օժ-
 տեալ լինելուն՝ կարող են մեզ
 ուրախ առնել ընտիր ճառերով,
 ու ականջնիս դաշնակաւոր երգով
 խտուելով՝ ունկնդրաց մեծ գո-
 հունակութիւն պատճառել: Բաւ-
 ական երիտասարդներ ալ կան մէ-
 ջերնս, որքնոյն յատկութիւնները
 վայելելով կարող ու պատրաստ են
 նպաստելու: Արդ՝ ինչու այս ար-
 տօնութիւններէ զրկուած գտնու-
 ինք: Յուսամք թէ Հայկական Մի-
 ութեան արդի Առնապետն, որ
 է Մեծ. Թափանճեան, բանիրուն
 ու աղգասէր անձ մը գործի յիշած-
 նիս ի միտ առնու, եւ, եթէ կա-
 բելի է, անոր գործնական ձեւ մը
 տայ:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ
 ՀԱՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 Ի ՆԻՒ ԵՈՐԴ**

Միութիւնս պատիւ ունի ծա-
 նուցանել ամէն ազգայնոց թէ
 Միժին վարդանայ Մամիկոնէի
 նահատակութեան տարեգարձը
 պիտի կատարուի առաջիկայ չա-
 բաթ օր (մարտ 15), ժամը 8 ին
 կէսօրէ վերջ, Միութեանս Սրա-
 հին մէջ, (Իսթըրն Բօթար Հօլ),
 անկիւն Յրդ ավընիւ և 7րդ փո-
 ղոց:

Այս տութիւն ամէն Հայ ազ-
 գայինք ի սրտէ կը հրաւիրուին
 ներկայ գտնուիլ սոյն Հանդիսին
 և միանալով Միութեանս անդու-
 մնց հետ պատուել Հայ անմահ ա-
 խոյանի մը յիշատակը և Միու-
 եանս կրդ տարեշրջանը:

Ի դիմաց գործադիր ժողովոյ
 Փ. Մ. ԱՅՎԱՏ Ծ. ՏԻՕՆԵԱՆ
 Քարտուղար Աթոռակալ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՍԷՍ

Սրբազան Պատրիարքի կոնգրակը կը յիշեցնէ մեզ լուսաւորչին ՆԵՐՍԷՍ որ ազգի փրկութեան համար կաշխատէր անխնայ, Նորին Սրբազնութեան յիշատակը տալուորուած լինելով, Նորա պատկերն պատշաճ սեպեցինք մերայնոց ներկայացնել, որպէս զի զնա ևս տօնախմբեն Սրբոց Վարդանանց հետ:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏ. ՄԱՆԿԱՍԱՐ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ

Այս երկրի մէջ փայլող ազգայնոց կենսագրութիւնն երբեմն պիտի հրատարակենք իր օրինակ քաջալերութեան Հայ գաղթականաց եւ ի փառս Հայոց ազգին, Ահաւաստիկ առաջինն:



Պ. Մ. ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ

Պ. Մանկասար Մանկասարեան, որ սոսաջնակալ և սկզբէն կը բռնէ Ամերիկեան Հայ գաղթականութեան մէջ, ծնած է Արարիկի Մազիկոտ անուն զիւղին մէջ, իւր հայրն էր Միկոտի աղա Մանկասարեան: Ի Պատանեկութեան Պ. Մանկասարեան Պօլիս գալով մտաւ Բօսնիայի վարժարան, ուր նշանաւոր հանգիստացաւ իրր ճարտարապետ: 1877ին իւր շրջանն լրացնելէ քիչ վերջ, Մարտոսի Աստուածարանական վարժարանը գնաց: Տ. Մանկասարեան իր ստանդարտական ատեն երբեմն կը քարոզէր Մարտոսի բողոքականաց ժողովարանին մէջ: Երիտասարդ ուսանողի պերճախօսութիւնն այնչափ գրաւեց ժողովուրդն որ քիչ ատենէն նոյն ժողովարանի քարոզչութեան պաշտօնին հրաւիրուեցաւ: Մարտոսի անցիք յանձնու գոհ Պ. Մանկասարեանի քարոզչութիւնէն հրաւիրեցին զնա ի պաշտօն երկրորդութեան: Պ. Մանկասարեան թէև երիտասարդ, հազիւ քսան-քսան ու մէկ տարեկան, ձեռնագրուեցաւ երէց: Իրր ինը տարի առաջ Մարտոսիացոց երիտասարդ քարոզչին Ամերիկա գալով Փրինսթըն Բօլէճը մտաւ իրր ուսանող Աստուածարանութեան: Այս միջոցներու Պ. Մանկասարեան շատ անգամ հրապարակաւ արտայայտուեց իր անհամարձակութեամբ իր անհամարձակութեամբ իր անհամարձակութեամբ:

Հարկին փողոցի երէցական ժողովարանէն հրաւիրուեցաւ ի պաշտօն հովուութեան: Բանի մը տարի այս պաշտօնն շարունակեց ի մեծ գոհունակութիւն իւր հօտին: Ապա Աստուածարանական և կրօնական այլ և այլ խնդրոց մէջ Պ. Մանկասարեանի գաղափարներն փոխուած են, անանկ որ օր մը ազատամտութեամբ յայտարարեց իր եկեղեցւոյն մէջ թէ այլ ևս անկարելի է իրեն համար երէցական եկեղեցւոյ մը մէջ քարոզել իր երէցական քարոզչին: Այսպէս թողով այդ եկեղեցին Բրիտանական ազատ եկեղեցի մը կազմեց նոյն քաղաքին մէջ, իւր նախորդ եկեղեցւոյ ժողովուրդէն մեծ մաս մը յարեցաւ այս նոր եկեղեցիին որոյ գումարումներն տեղի կուենար Սէնթ Ճօնս անուն մեծ սրահին մէջ, ի սկզբնայն այնչափ մեծ բազմութիւնն մը կը խռնէր հոն որ նստելու կամ կենալու տեղ չէր մնար սրահին մէջ: Պ. Մանկասարեան թէ իր երէցական և թէ իր ազատական եկեղեցւոյ քարոզչի ռարիշ շատ մը եկեղեցիներէ հրաւիրուած է խօսելու համար, և ուր որ խօսած է, ժողովուրդէն յարգուած ու գնահատուած է իր ճարտարախօսութիւնն: Հետզհետէ Պ. Մանկասարեան արմատական գաղափարներու յարեցաւ, և վերջապէս միացաւ «Եթէքըլ Բըւշըրիսթ» (Մշակութիւն բարոյականի): Տարիէ մը աւելի է որ այս պերճախօս Հայ Բարոյիչն Նիւ Եորք հրաւիրուած է իր օգնական հոգևաւոր Ֆէլիքս Աւալէր փրօֆէսորին, և այժմ մերթ կը խօսի Չիքքըրին Հօլ անունին սրահին մէջ, և կրթական երկրորդին Հարլըմ Տրամպիլի Հօլ սրահին մէջ: Տ. Մ. Մանկասարեան 1877ին ամուսնացած է Ալիս Ենեան Տըթ. Նըշան աղայի դստեր, Օր. Ագապիին հետ: Առաջ ունին այժմ երկու զաւակներ, աղջիկ մը ու տղայ մը, և կը բնակին խաղաղութեամբ Նիւ Եորքի վերին թաղին մէջ:

ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ

— Արմէնիոս ազգային լրագրէն կրնանք թէ Մարտիկոյ Հայերը Սրբոց Վարդանանց զօրավարաց տօնախմբութիւնն անցեալ ամսոյ 20ին կատարեւ են բոստոնի մօտ: Մենք ևս զնոյն պիտի կատարենք հոս յառաջիկայ շաբաթ երեկոյ, ինչպէս որ պաշտօնական կերպիւ ծանուցուած է: Յուսումը թէ ամէն հայ պիտի հանկիսանայ ատոր վայելման և փառաւորութեան:

— Յունաց երեկոյնէն Պ. Միշէլ Զարիֆի Լոնտօնէն, և Պ. Անթրէ Սինկրօս Աթէնքէն հարիւրական իրաւունքներ են՝ Բերայի թաղային յոյն ժարանի վերաշինութեան ի նըպաստ:

— Կրթական Նախարարութիւնը շրջաբերականաւ պատուիրեց գաւառական իշխանութեանց, որ եթէ մահմետական ծնողք ուզեն իւրեանց որդիքը Խալիկոյ կառավարութեան կողմանէ բացուած վարժարանները շրջել, պարտին մահմետական երկրորդական վարժարանաց մէջ տող նախ կրօնական ուսումնի և վկայական ստանալ:

— Թարիք թուրք լրագրէր կը հերքէ մայրաքաղաքէն առ եւրոպական լրագրէր ուղղել այն լուրերն թէ՝ Օսմանեան կառավարութիւնն որոշած է քննել Կըլէտէի արդի վիճակին՝ յստա՞յ թերած գէպերն և բարեփոխել տեղւոյն նոր օրէնքներն, և թէ՝ Եթէքի փաշայի պատուիրուած է բանակի կազմելու երկու լեաց հետ:

— Կառավարութիւնն որոշեց որ քաղաքային վարժարանաց ուսանողք ալ այսուհետեւ զինուորական օրինաց ներքեւ գտնուին, որպէս են զինուորական վարժարանաց ուսանողք: (Փոքնը)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԱՔՍԻԱ

ԿԱՄ

ՎԱՐԺՈՒՅԻՆ

ՆՐԿ

ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՆԻ ՏԻԽՍՆԻ

ԳԼՈՒԽ Բ.

Ոչինչ այնչափ մարդս կը ձմէ որչափ ուրախութեան ձայները յուսահատութեան մէջ: Հոգին կը գոչայ տարբերութիւնն այն որ կը տիրէ գոհ էակաց և իւր նսեհ վիճակին մէջ, և այդ բազմապատկիւնն առաւել ևս ցաւոց բեռը կը ծանրացնէ:

Բարեկենդանի երկարաձիգ փանկերը եւր Վարդանանց ընտանեաց ակնոյն կը հասնէր իրենց հոգւոյն վերջն առաւել ևս կ'արիւնէր: Մէն մի հառաչ սրտի՝ փոխանակ ազատութենէն դուրս ելնելու դպրն օրհանգ պատճառելով, ընդհակառակն իւր ընթացքին մէջ կրտստ մնալով յետս կ'ընկնէր, և այն հառաչը՝ իրր չիթ տառապանաց, սրտին վրայ ստուշով անոր շարժումը կը գանգաւորէր:

Ձգայուն հայրը կը լսէր այդ խորհածանց հնչիւններն, և ցաւալից ակնարկ մի կը նետէր իւր սիրելի դստեր վրայ, որուն ոչ միայն ուրախութիւն չէր կրնար պատճառել այդպիսի ուրախութիւն տօնելու միջոցին, այլ և նոյն իսկ սեղանի պարզ խնդրէ մի անկարող էր մատակարարել անգամ: Գործադու չէր հայր մի առ ոչինչ կը համարէ իւր ցաւերը, ամէն բանի կարող է համբերել, միայն թէ իւր սիրոյն ծնունդը վերծնայ վշտերէ և զրկմանէ:

Պ. Վարդանանց իրր յանցանոր կը նայէր կնոջը, և իրր թէ ինքն կամուտը պատճառ լինէր իրենց թըւուս կացութեան, ոչինչ կը համարձակէր ըսել և ոչ իսկ ողբալ բացարձակապէս: Ինքն իրեն կը հիւսնէր, և դստերը սիրոյ նայումքին և գուրգուրուից խնամք մէջ կը գտնէր միութարութիւն, մանաւանդ այն դառն պարագայից մէջ որք հետեանք էին կնոջը կծու յանգիստնութեանց:

Կան այնպիսի կանայք որք գոչեւ կուզեն բազմալից լինել իրենց ամուսնոյն բարեբաւոտ առուց, և չեն ներեր որ և է դժբաղդութիւն ուսկից իրենք բաժին պիտի ունենան:



Պ. ՎԱՐՍԱՄԵԱՆ

Իրր ընտանեաց ստանաւ արտաւորութիւն և գաւառութիւն կը շնչէր, և գոգոցութեան թոյն կ'արձակէր իրենց շուրջը:

Այդ կարգի կանայք կը վերաբերէր և Տիկին Վարդանանց, Հալիկոսութեամբ կը նայէր ամուսնոյն առանց ինկատ տանելու այդ հէքին թշուառ կացութիւնը: Նա մանաւանդ այդ հալիկոսութիւնն առաւել ևս կ'արժարէր հաստատուելով իւր անկարողութիւնը գուցէ մատակարարելու կենաց անդորրն ու չքեղութիւնը: Տիկինը եթէ անսիրտ ամուսին էր, ընդհակառակն մայր էր գործադու թէ:

Կինը շատ հակաձախորդներ, թշնամներ, զրպարտիչներ ունեցաւ: Բայց ո՞վ արդեօք համարձակած է մօր սուրբ անունը սրբապղծելու: Կինը ամբողջ իւր սիրտն ու հոգին մայրենի զգացման մէջ բովանդակած է, այսինքն իւր էութիւնը ուրիշ փափուկ էութեան մէջ ամփոփած է, և անով փոխմ անձնութեան պատկերը հանգիստացուցած է: Անոնք որ շար մայրեր են պարզապէս մայրութեան ճիւղներն են, անարժան մօր սրբազան անունը կրելու: Հրէշներ են սոսկ որք կը յղանան և ծընունդը կուտան:

Տիկին Վարդանանց կը լսէր ցընծու թեան աղապակները փողոցին մէջ, և անոնք նոյնչափ խայթոցներ էին իւր մայրենի սրտին, և նոյնչափ սրաքներ իւր սրտախօսութեան: Անհպատակ կ'երթար կուգար մէկ սենեկէն միւսը յուզեալ կերպարանօք և քայլիւք: Վերջապէս իրր թէ ընկ



ՈՐԸ ԶԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ձեալ ցաւոց տատկութեան, նստուած թոռակի մը վրայ իրենց գրեթէ կրտսերի սենեկին մէջ ուր բազմած էին տղան ու դուստրն, և աշերը յառելով աղքատիկ սեղանի մը որ մարմար բայց հին ձերմակ կտաւով ծածկուած էր, յուսարեկ ըսաւ:

— Արքայիս, ահա՛ և քաւ Բարեկենդանոյ: ահա՛ քեզ մեր տըրտուածներն և արտաւորք իրր գուարձութիւն և խնոյք: Կանգ տուաւ, կլկց հեծկտանք մի, և ապա յարեց: ահա՛ քեզ, դուստր իմ քիչ մը հաց ու պանիր, սեղանը ցոյց տալով:

Արքայիս հօրը քովն ելնելով ի հապճեպ գէպ ի մօրն ընթացաւ, և ձեռքը բռնելով ու համբուրելով զայն, ըսաւ:

— Մայր, բաւ է ինձ որ դուք ողջ առողջ լինիք և լաւագոյն Բարեկենդան չեմ խնդրեր: Ես երիտասարդ եմ, քսան տարի ապրած եմ տակաւին, կենանք ինձ համար է, ժամանակ ունիմ վայելելու զայն: Բայց դուք, մայր իմ, դուք պէտք ունիք կենաց վայելմանց:

— Չայդ հօրք ըսէ, որդեակս: — Մայր, մի՛ ընդ վայր յանդիմաներ հայրս: Ինքը չեզոք արդեօք առաջին գոհն իւր տարապայման վիճակին:

— Թո՛ղ առաւել լրջամիտ լինէր, և իւր դրամներն ընդ վայր վտանգի չ'ենթարկեր:

— Բայց, մայրի՛կ, այնչափ գործունեաց և կարող անձինք նոյն դրժ բազմութեան չը հանդիպեցնան արդեօք:

— Թող աւելի զգոյշ լինէր, և խաղի երազոց չը մատներ իւր հարստութիւնը: Պարզամիտ մարդուն վերջն անշուշտ այս կը լինի: Անոնք որ անկարող են իրենց ընտանեաց յաջող տալագայ մի պատրաստելու գոնէ չ'ամուսնանան և շատ մը անմեղներ գոգոցութեան թող չը գատապարտեն:

— Ամուսնի, մայր, փառք հօրս՝ բազմութիւն տարիներ երջանիկ ապրեցանք: Եթէ ինքն անկարող է արդ մեր ապրուստը հոգալու, իմ պարտքս է աշխատել, և ըստ կարողութեան, հանգիստ կացութիւն մը ապահովել ձեզ:

Հայ Օրիորդ մը՝ դրամական ան-
ձուկ վիճակի մը մէջ լինելով կը փա-
փաքի իւր եօթն ու կէս օրքմանոց ,
ջառակութեւի և ընտիր դաշնակն վաճ-
ճառել չատ ածան զնով : Սա նուա-
գարանն լաւ վիճակի մէջ է , և քիչ
ատեն միայն դործածուած : Կինն է
175 մարտ , ի՞նչ և դուրս վճարուած
է 400 աղարկներ :